'ի այնմ պատերազմի ստանասցէ բաժին 'ի աւարի բոլոր ժամանակ այնմ պատերազմի ստացեալ, միևնոյն գունակ որպէս կենդանիս և առողջս։

ԳԼՈՒԽ ՅԺԳ.

Ամենայն կին ամուսնացեալ ընդ առն զինուորի որ իցէ տղայ և ոչ կարգաւոր և իշխան եթէ մարտիրոսասցի առն նորայ մէջ պատերազմի, եթէ կին նորայ մի գոցի այլ այր զի ամուսնասցի, տունն հայոց հարկաւոր է տացէ մի 'ի չորից բաժնոյ ռոճկի առն առ կին նահատակելոյն, բոլոր ժամանակս կենաց կնոջն, և եթէ կինն նորայ գոցի այլ այր և ամուսնասցի տունն հայոց ազատ լիցի 'ի վեր ասացեալ ծախուց։

ԳԼՈՒԽ ՅԺԴ.

Բաժին աւարաց նահատակաց ստացի առաջի ժառանգ նահատակին, եթէ ոչ գոցի ժառանգ, հատուցանել պարտ է մերձաւոր յազգականի իւրոյ ըստ Օրինօք։

ԳԼՈՒԽ ՅԺԵ.

Ոչ ոք գերի 'ի պատերազմի եթէ քրիստոնեայ և կամ հեթանոս մի վաճառեսցի, այլ մեղմ և հանդարտ պահեսցի մինչև 'ի ժամանակի խաղաղութեան, եթէ գոցի գերի մեզանէ 'ի ձեռինս